



# Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ



### Տեսեսես ԿրուԿր

4 ՄԱՐՏ 2018

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 4

#### ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(56 եւ 57)

**Տ**էրը այսպէս կ'ըսէ.  
 «Իրաւունքը յարգեցէք եւ արդարութիւն ըրէք, որովհետեւ ահա մօտեցաւ ժամանակը երբ պիտի փրկեմ ձեզ, հասաւ ժամանակը երբ պիտի ողորմիմ ձեզի: Երանի այն մարդուն որ արդարութիւն կ'ընէ եւ իրաւունքը կը յարգէ, իմ Շաբաթներս կը պահէ եւ չի պղծեր գանոնք, եւ կը դադրի անիրաւութիւն գործելէ»: Տիրոջ հաւատացած ոեւէ օտարագրի թող չխորհի եւ չըսէ. «Տէրը զիս իր ժողովուրդին մէջ պիտի չընդունի», եւ ոեւէ ներքինի թող չմտածէ, ըսելով. «Ես անպտուղ ծառ մըն եմ, Տէրը զիս չ'ընդունիր»:

Տէրը այսպէս կ'ըսէ.

«Այն ներքինիները որոնք իմ Շաբաթներս կը պահեն, կ'ընտրեն այն բաները զոր ես կ'ուզեմ եւ իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, իմ տանս եւ իմ ժողովուրդիս մէջ աւելի լաւ տեղ եւ պատիւ պիտի տամ անոնց, քան իմ որդիներուս եւ դուստրերուս. անոնց պիտի տամ յաւիտենական պատիւ մը որ բնաւ պիտի չ'ընջուի: Իսկ այն օտարագրիները որոնք ինձի հաւատացին ինձի ծառայելու համար, եւ իմ անունս սիրեցին՝ ինձի ծառայ եւ ազախին ըլլալու համար, եւ բոլոր անոնք՝ որոնք իմ Շաբաթներս կը պահեն եւ չեն պղծեր, եւ իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, զանոնք իմ սուրբ լեռս պիտի տանիմ եւ զիրենք պիտի ուրախացնեմ իմ աղօթքի տանս մէջ. պիտի ընդունիմ իմ Սեղանիս վրայ իրենց մատուցած ողջակէզներն ու զոհերը, որովհետեւ իմ տունս աղօթքի տուն պիտի ըլլայ բոլոր հեթանոսներուն համար»:

Այսպէս կ'ըսէ Տէր Աստուած որ Իսրայէլի ցրուած զաւակները կը ժողովէ.

«Պիտի ժողովեմ օտարագրիները եւ իմ ժողովուրդիս միացնեմ»:

Եկէ՛ք, ով դաշտի գազաններ, եկէ՛ք կերէ՛ք իմ ժողովուրդս, ո՛վ անտառի գազաններ: Տեսէ՛ք, ահա, կուրցած են անոր առաջնորդները, ի վիճակի չեն դատելու. կը նմանին համր շուներու որոնք

չեն կրնար հաչել. անկողին կ'երազեն, քնանալ կը սիրեն: Իրենց հոգիով աներես շուներու կը նմանին. չարիքէն չեն կշտանար, որովհետեւ կորսնցուցած են իրենց դատողութիւնը: Ամէնքն ալ իրենց ուզածը ըրին, իւրաքանչիւրը իր շահը հետապնդելով: Ըսին. «Եկէ՛ք գինի առնենք եւ խմենք՝ մինչեւ գինովնանք, որովհետեւ վաղն ալ այսօրուան պէս եւ շատ աւելի լաւ պիտի ըլլայ»:

Տեսէ՛ք ի՛նչպէս արդարը կը կորսուի եւ ոեւէ մէկը հոգ չ'ըներ. արդար մարդիկը աշխարհէն կը վերցուին եւ ոեւէ մէկը չ'անդրադառնար թէ աշխարհի անիրաւութեան պատճառով անիկա կը վերցուի: Բայց անիկա խաղաղութեամբ գերեզման պիտի մտնէ որովհետեւ Աստուած է որ գայն վերցուց աշխարհէն: Իսկ դուք հո՛ս եկէ՛ք, անօրէն զաւակներ, պոռնիկներու եւ շնացողներու սերունդ: Ո՞վ կը ծաղրէք, որո՞ւն դիմաց կը փորձէք արդարանալ. միթէ՞ դուք չընտրեցի՞ք ձեր կորուստը, ո՛վ անօրէն սերունդ: Դուք չէի՞ք որ անտառախիտ ծառերուն տակ ձեր կիրքերը հրահրող աստուածներու կ'աղօթէիք եւ ձորերու խորը, ժայռերու գլխուն կամ քարայրներու մէջ ձեր զաւակները կը մորթէիք: Այդ քարէ կուռքերը պիտի ըլլան ահա ձեր բաժիրը. անո՛նք պիտի ըլլան ձեր ժառանգելիքը, որովհետեւ անոնց առջեւ թափեցիք ձեր գինիները եւ անոնց մատուցանեցիք ձեր զոհերը: Եւ կ'ուզէք որ այս բոլորին վրայ չբարկանա՞մ, կ'ըսէ Տէրը:

Բարձր լեռան բարձունքին դրիք ձեր պոռնկութեան անկողինը, հոն ելաք զոհ մատուցանելու: Ձեր տուններուն դռներուն դրանդիկներուն ետին ալ այդ կուռքերուն յիշատակները կախեցիք, կարծելով որ ինձմէ հեռու մնալով աւելի բան մը պիտի գտնէք: Ձեր անկողինները լայնցուցիք, այր հոմանիներու հետ անկողին մտաք եւ անդադար պոռնկութիւն ըրիք անոնց հետ: Օտար երկիրներէ բազմաթիւ աստուածներ որդեգրեցիք, եւ տակաւին ուրիշներ ալ փնտրելու համար ներկայացուցիչներ զրկեցիք ձեր սահմաններէն դուրս. այնքան նուաստացաք որ նոյնիսկ դժոխքէն ձեզի աստուած մը փնտրեցիք: Եւ թէպէտ նոր աստուածներ փնտրելէն յոգնեցաք, բայց բնաւ չըսիք. «Ա՛լ կը բաւէ», որովհետեւ խորհեցաք թէ անոնք կրնան ձեզի ոյժ տալ, եւ ուստի չհնազանդեցաք ինձի: Որմէ՞ վախցաք կամ սարսափեցաք որ ուրացաք զիս

եւ չյիշեցիր անգամ, մոռցաք զիս եւ ձեր հոգն անգամ չըրիք: Ես ալ հիմա ձեզ տեսնելով հանդերձ՝ պիտի անտեսեմ, որովհետեւ յաւիտենական Աստուածն եմ ես, եւ դուք ատիկա գիտնալով հանդերձ՝ չվախցաք ինձմէ: Հիմա ձեզի ցոյց պիտի տամ ձեր արդարութիւնը՝ ձեզի յայտնելով ձեր չարիքները, որոնք պիտի չօգնեն ձեզի: Ձեր այդ կուռքերուն պիտի աղաղակէք, բայց անոնցմէ ոեւէ մէկը ձեզ պիտի չփրկէ ձեր նեղութենէն, որովհետեւ հովը պիտի քչէ ձեր աստուածները եւ մորրիկը զանոնք պիտի տարտղնէ: Մինչդեռ անոնք որոնք ինձի յուսացած են՝ անոնք երկիրը պիտի ստանան որպէս վարձատրութիւն, իմ սուրբ լեռս պիտի ժառանգեն: Այն ատեն պիտի ըսեն. «ճամբաները մաքրեցէք. իմ ժողովուրդիս ճամբէն վերցուցէք ամէն խոչընդոտ»»: Այսպէս կ'ըսէ Բարձրեալ Տէրը որ բարձունքներուն մէջ կը բնակի յաւիտեան, ան՝ որ սուրբերուն մէջ Սուրբն է. ԲԱՐՁՐԵԱԼ ՏԵՐ է անոր անունը. որ իր սուրբերուն մէջ կը բնակի, համբերութիւն կու տայ ընկճուածներուն եւ կեանք կու տայ սրտաբեկներուն, ըսելով. «Յաւիտեան վրէժխնդիր պիտի չըլլամ, միշտ ձեզի դէմ բարկացած պիտի չմնամ. չէ՞ որ ես եմ հոգին տուողը, ես ստեղծեցի բոլոր շունչերը: Կարճ ժամանակ մը տրամեցուցի իմ ժողովուրդս իր մեղքերուն պատճառով. հարուածեցի զայն, երես դարձուցի անկէ, եւ ան սրտնեղած՝ աւելի ըմբոստացաւ եւ իր ուզածը ըրաւ: Բայց ես իր խորհուրդներն ու գործերը տեսայ եւ զայն բժշկեցի. իմ խօսքովս մխիթարեցի զայն՝ ճշմարիտ մխիթարութիւնը տալով իրեն եւ իր սգաւորներուն: Խաղաղութեան վրայ խաղաղութիւն տուի թէ՛ հեթանոսներուն եւ թէ՛ իմ ժողովուրդիս, - կ'ըսէ Տէրը, - եւ ես պիտի բժշկեմ զիրենք: Իսկ անօրէնները պիտի ծփան ծոփու մը պէս որ հանգիստ չունի բնաւ, եւ որուն ջուրերը ցեխ ու կաւ դուրս կը նետեն: Այո, ամբարիշտները խաղաղութիւն պիտի չգտնեն», - կ'ըսէ Տէրը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱՄ ՆԱՄԱԿԷՆ  
(4.17-5.14)

**Ա**րդ, Տիրոջ կողմէ կ'ազդարարեմ ձեզի. - չըլլայ որ կրկին դառնաք այն կենցաղին որով հեթանոսները կ'ապրին անմտօրէն: Անոնց միտքը խաւարած է. իրենց տգիտութեան եւ յամառ անտարբերութեան պատճառով օտարացած են Աստուծոյ կեանքին, եւ քանի այդ կեանքին յոյսը չունին, իրենք զիրենք անառակութեան տուած՝ ամէն պղծութիւն կը գործեն անյագօրէն: Բայց ես ձեզի սորվեցուցի թէ այդ չէ՛ Քրիստոսի ճամբան: Դուք լսեցիք իր պատգամները եւ իրեն միանալով սորվեցաք թէ Յիսուսի մէջ է ճշմարտութիւնը: Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն ձեր նախկին

ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եւ եղէք նոր մարդ մը, Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած. եւ ապրեցէ՛ք ճշմարիտ կեանքը, արդարութեամբ եւ սրբութեամբ:

Հետեւաբար ստախօսութենէ հրաժարեցէ՛ք: «Ամէն մարդ ճշմարտութիւնը թող ըսէ իր ընկերոջ», ինչպէս կ'ըսէ մարգարէն, որովհետեւ Քրիստոսի միացած ըլլալով՝ իրարու անգամներ ենք: Եւ, ինչպէս սաղմոսերգուն կ'ըսէ. «Նոյնպէս երբ բարկանա՛մ՝ չըլլայ որ մեղանչէ՛մ». եւ բարկացած չմնաք մինչեւ իրիկուն: Բնաւ առիթ մի՛ տաք սատանային: Ով որ գողութեամբ կ'ապրէր թող այլեւս չգողնայ, այլ վարժուի արդար վաստակով ո՛չ միայն իր հացը շահելու, այլ նաեւ բարիք գործելու՝ օգնելով անոնց որոնք կարօտ են: Որեւէ տգեղ խօսք չելլէ ձեր բերնէն: Խօսեցէ՛ք միայն ինչ որ պէտք է, ինչ որ բարի է՝ ուրիշներուն հաւատքը ամրապնդելու համար, որպէսզի լսողները շնորհքով լեցուին: Մի՛ տրամեցնէ՛ք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով կնքուեցաք՝ փրկութեան օրուան հասնելու համար: Ձեզմէ արմատախիլ ըրէ՛ք ամէն դառնութիւն, բարկութիւն եւ զայրոյթ, պոռչտուք եւ հայհոյութիւն, եւ առաջը առած կ'ըլլաք անոնց չար հետեւանքներուն: Իրարու հանդէպ քաղցր ու գթած եղէ՛ք եւ ներեցէ՛ք իրարու, ինչպէս Աստուած ալ Քրիստոսի միջոցաւ ներեց մեզի:

Աստուծոյ նմանեցէ՛ք, որպէս իր սիրելի որդիները, եւ սիրով շարժեցէ՛ք, այնպէս ինչպէս Քրիստոս մեզ սիրեց եւ մեզ փրկելու համար ինքզինքը Աստուծոյ ընծայեց որպէս անուշահոտ պատարագ եւ զոհ: Պոռնկութեան, ոեւէ պղծութեան կամ ազահութեան խօսքն իսկ թող չըլլայ ձեր մէջ, որովհետեւ այդպէս կը վայելէ հաւատացեալներուն: Վայել չէ որ լկտի եւ ամբարիշտ խօսակցութիւններով կամ խեղկատակութեամբ զբաղիք. այլ՝ ձեր խօսակցութիւնը միշտ գոհաբանութիւն պէտք է ըլլայ: Մէկ բան վստահ գիտցէ՛ք, թէ ոեւէ մէկը որ պոռնկութիւն կ'ընէ, պղծասէր է կամ ազահ - եւ ազահութիւնը կու պաշտութիւն է - ժառանգութիւն պիտի չունենայ Քրիստոսի եւ Աստուծոյ արքայութեան մէջ: Հետեւաբար չըլլայ որ ոեւէ մէկը պարապ խօսքերով ձեզ խաբէ. որովհետեւ այս բաներուն համար Աստուած իր բարկութիւնը պիտի թափէ անխրատ մարդոց վրայ: Ասկէ ետք որեւէ յարաբերութիւն մի՛ ունենաք այնպիսիներուն հետ, որովհետեւ թէպէտ ժամանակ մը խաւար էիք, սակայն հիմա որ Տիրոջ միացաք՝ լոյս էք: Հետեւաբար լոյսի որդիներուն վայել ձեւով ապրեցէ՛ք. որովհետեւ լոյսի պտուղներն են՝ բարութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը: Ձանացէ՛ք հասկնալ թէ Աստուած ի՛նչ կ'ուզէ ձեզմէ, բնաւ մասնակից մի՛ ըլլաք խաւարին գործերուն, որոնք Աստուծոյ կամեցած պտուղները չեն տար: Ընդհակառակը,

ձաղկեցէք զանոնք, որովհետեւ մոռթին մէջ կը գործուին անոնց արարքները որոնց մասին խօսիլն իսկ ամօթ է: Բայց բոլոր այդ ծածուկ արարքները Քրիստոսի լոյսով կը յայտնուին եւ կը յանդիմանուին, որովհետեւ լոյսը կը յայտնէ ամէն բան: Ահա թէ ինչու մարգարէն կ'ըսէ.

«Արթնցի՛ր, ո՛վ քնացած.  
դո՛ւրս ելի՛ր մեռելութենէդ,  
եւ Քրիստոս պիտի լուսաւորէ քեզ»:

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(16.1-31)

**Ի**ր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց.-

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացւածքներուն վերակացու տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին, ըսելով թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. “Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ”: Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ. “Ի՞նչ կրնամ ընել. ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ թէ ի՛նչ պէտք է ընեմ, որ երբ տէրս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ զիս ընդունին իրենց տուներէն ներս”: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց. “Ո՞րքան պարտք ունիս տիրոջս”: Ան պատասխանեց. “Երկու հարիւր թիթեղ ձէթ”: Տնտեսը ըսաւ. “Ահա ասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր”: Յետոյ հարցուց միւսին. “Դո՞ւն որքան պարտք ունիս”: Ան պատասխանեց. “Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն”: Տնտեսը ըսաւ. “Ահա ասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն”: Տէրը ասիկա լսելով գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը վարելու մէջ աւելի ճարպիկ են քան լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի.- Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտեանական յարկերու մէջ ընդունին:

«Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է, մեծին մէջ ալ հաւատարիմ է. իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է, մեծին մէջ ալ անհաւատարիմ է: Հետեւաբար, եթէ աշխարհիկ հարստութիւնը գործածելուն մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի վստահ ձեզի: Այսինքն, եթէ հաւատարիմ չեղաք աշխարհիկ հարստութեան, որ ձերը չէ, ինչպէ՞ս կ'ընդէք որ Աստուծո ձեզի տայ ձեզի սպասող ճշմարիտ հարստութիւնը: Ո՛չ մէկ ծառայ կրնայ

երկու տէրերու ծառայել, որովհետեւ կա՛մ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկը պիտի մեծարէ եւ միւսը արհամարհէ: Չէք կրնար թէ՛ Աստուծոյ ծառայել եւ թէ՛ դրամին:

Փարիսեցիները, որոնք դրամասէր էին, երբ այս բոլորը լսեցին, սկսան հեգնել զինք: Յիսուս ըսաւ անոնց. «Դուք ձեզ ուրիշներուն արդար ցոյց կու տաք, սակայն Աստուծո գիտէ ձեր սիրտերը: Որովհետեւ մարդոց աչքին փառաւորը Աստուծոյ աչքին անարգ է: Մովսէսի Օրէնքը եւ մարգարէներու ըսուածները մինչեւ Յովհաննէս ի գօրու էին. անկէ ասդին Աստուծոյ արքայութիւնը կ'աւետարանուի եւ ամէն մարդ կը փութայ բռնութեամբ ներս մտնել: Աւելի դիւրին է, որ երկինքն ու երկիրը կորսուին, քան Օրէնքին ամենափոքր տառը:

«Ով որ իր կինը արձակէ եւ ուրիշ մը առնէ, կը շնայ. նոյնպէս կը շնայ ան, որ արձակուած կնոջ հետ կ'ամուսնանայ:

«Մեծահարուստ մարդ մը կար, որ բեհեզ եւ ծիրանի հագուստներ կը հագնէր եւ ամէն օր փառաւոր խնճոյք կ'ընէր: Ղազարոս անունով աղքատ մըն ալ կար, որ անոր դրան առջեւ կը նստէր եւ կը յուսար իր փորը լեցնել մեծահարուստին սեղանի աւելցուքներով: Ղազարոս վէրքերով ծածկուած էր, եւ շուներ կու գային իր վէրքերը կը լիզէին: Աղքատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աբրահամին մօտ: Մեծահարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ: Դժոխքին մէջ, մինչ մեծահարուստը կը տանջուէր, աչքերը բարձրացուց եւ հեռուն Աբրահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը որ կը նստէր անոր քով: Մեծահարուստը աղաղակեց. “Հայր Աբրահամ, ողորմէ՛ ինձի եւ զրկէ Ղազարոսը, որ մատին ծայրը ջուրին թաթիս է եւ գովացնէ լեզուս, որովհետեւ այս կրակին մէջ ծարաւէն կը տառապիմ”: Աբրահամ ըսաւ անոր. “Որդեա՛կ, յիշէ թէ ի՛նչպէս դուն քու կեանքիդ ընթացքին ամէն բարիք վայելեցիր, մինչ Ղազարոս չարչարուեցաւ: Հիմա ան հոս կը հանգստանայ, մինչ դուն հող կը տառապիս: Գիտցիր նաեւ, որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ: Եթէ ուզեն այստեղէն ձեր մօտ անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ”: Մեծահարուստը ըսաւ. “Կ'աղաչեմ, Հայր Աբրահամ, Ղազարոսը զրկէ իմ հօրս տունը ուր հինգ եղբայրներ ունիմ. թող զանոնք նախազգուշացնէ, որպէսզի անոնք ալ տանջանքի այս վայրը չգան”: Աբրահամ ըսաւ անոր. “Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն”: Մեծահարուստը ըսաւ. “Ասիկա բաւարար չէ, Հայր Աբրահամ. բայց եթէ մեռելներէն մէկը յարութիւն առնէ եւ երթայ իրենց, պիտի ապաշխարեն”: Աբրահամ պատասխանեց. “Եթէ Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն մտիկ չեն ըներ, մեռելներէն յարութիւն առնող մըն ալ պիտի չկարենայ համոզել զիրենք»»:

# ՄԵԾ ՊԱՀՔԻ ԼՍԱՐԱՆ

ՅԵՏ ԽՆԴԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՊԱՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ:

ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ՝ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7.00

4

## ՄԻՋԻՆՔ

Չորեքշաբթի, 7 Մարտ

5

Չորեքշաբթի, 14 Մարտ

Նիւթ՝ Հաւատքը տարագրութեան մէջ

(Հայեացք Ս. Գրքին մէջ արձանագրուած փորձառութեան վրայ)

Կը մատուցէ Գերյ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան

6

Չորեքշաբթի, 21 Մարտ

Նիւթ՝ Ծնորհքներն ու պարգևները վասն ազգակերտումի

Կը մատուցէ Կարօ Սրկ. Նոյսուտեան

# ՄՈՒՐԲ ԶԱԿՈՒ

Առաջնորդանիւս Մայր Եկեղեցի

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՐ՝

ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

ԵՒ

ՏՐԿԱՆՅ ՕԺԱՆՈՒԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԵՐՆ

Կը մատուցուի

# ՄԻՋԻՆՔԻ ԸՆԹՐԻՔ

Չորեքշաբթի, 7 Մարտ 2018

Երեկոյեան ժամը 8:00

Մոնթրէալի Հայ Կեդրոն

Տեղեր սպասուովելու համար հաճեցէք հեռաձայնել  
Տիար Վարդան Բարսիսեանին՝ 438 863 0272,  
կամ Եկեղեցոյ գրասենեակ՝ 514 331 5445 x202 քիւին,

Մուտքի նուէր՝ 25\$